պայմանագրի միակողմանի լուծման հետ կապված վեճերով՝ բազային տուրքի 30-ապատիկի չափով:

Սույն գործով, նկատի ունենալով, որ Հայցվորը նախապես վճարել է հայցադիմումի ներկայացման համար օրենքով սահմանված չափով պետական տուրքի գումարը, միաժամանակ արձանագրելով, որ տվյալ դեպքում բացակայում է **գրավոր միջնորդությունը**՝ դատական ծախսերի հետ կապված, Դատարանը գտնում է, որ դատական ծախսերի հարցը պետք է համարել լուծված:

Ելնելով վերոգրյալներից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 5-9-րդ, 101-րդ, 109-րդ, 189-րդ, 191-րդ, 192-րդ, 198-րդ և 362-րդ հոդվածներով, Դատարանը

ՎՃՌԵՑ

1. «Բիդեք» ՍՊԸ-ի հայցն ընդդեմ ՀՀ պաշտպանության նախարարության, վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջներ չներկայացնող երրորդ անձ՝ «Ամերիաբանկ» ՓԲԸ-ի՝ պայմանագրի միակողմանի լուծումն և «ԲԻԴԵՔ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ որոշումն անվավեր ճանաչելու պահանջների մասին, բավարարել.

անվավեր ճանաչել ՀՀ պաշտպանության նախարարության և «ԲԻԴԵՔ» ՍՊԸ-ի միջև 26.05.2025թ. կնքված N ՓՆՄԱՇՁԲ-25-10/15-4 պայմանագիրը ՀՀ պաշտպանության նախարարության կողմից միակողմանի մասնակի լուծելու մասին 20.03.2026թ. ծանուցումը (որոշումը),

անվավեր ճանաչել ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ Կ. Բրուտյանի 30.03.2026թ. թիվ 218 որոշումը՝ «ԲԻԴԵՔ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ:

2. Դատական ծախսերի հարցը համարել լուծված:

3. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի 27.03.2026 թվականի որոշմամբ կիրառված հայցի ապահովման միջոցը պահպանել մինչև վճռի օրինական ուժի մեջ մտնելը:

Վճիռը կամովին չկատարելու դեպքում այն կկատարվի հարկադիր կատարումն ապահովող ծառայության միջոցով՝ պարտապանի հաշվին:

Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և կարող է բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ վճռի հրապարակման պահից մեկամսյա ժամկետում:

ԴԱՏԱՎՈՐ **Ի. ԵՐԻՑՅԱՆ**